



## ՆԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի հայցորդ

### ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԵՐԱՌԻԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դրամական հոսքերի հաշվետվության՝ ուղղակի և անուղղակի մեթոդներով ներկայացումը մինչ այժմ էլ բուռն քննարկումներ է առաջացնում տեսաբանների շրջանում: Ունենալով առավելություններ և թերություններ՝ այս երկու մեթոդներն էլ կիրառելի են համարվում միջազգային հաշվապահական չափորոշիչներով: Հոդվածում ներկայացվում են ուղղակի և անուղղակի մոտեցումներով դրամական հոսքերի վերլուծության մեթոդաբանական մոտեցումները բանկային համակարգում:

**Հիմնաբառեր.** ֆինանսական հաշվետվություններ, դրամական հոսքերի ուղղակի և անուղղակի մեթոդներ, կառավարչական որոշումներ

JEL: G2, G33, G24, G29

Դրամական հոսքերի հաշվետվությունների հրապարակման անհրաժեշտությունն ի հայտ եկավ դեռևս անցյալ դարի 60-ականներին: Կորպորատիվ գործարարության զարգացմանը զուգահեռ, հիմնախնդիրներ առաջացան դրամական հոսքերի տեղաբաշխման, դրամի շրջապտույտի արագացման, ինչպես նաև դրամական միջոցների օգտագործման արդյունավետության վերաբերյալ կառավարչական որոշումներ կայացնելու առումով: Շատ դեպքերում, ցուցաբերելով շահութաբերության բարձր ցուցանիշներ և գործարարության մրցունակ ակտիվություն, կազմակերպությունները հայտնվում էին ծանր ֆինանսական վիճակի մեջ՝ դրամի պակասի պատճառով: Չկարողանալով կարգավորել դրամական հոսքերը իրացման ծավալների աճի կամ մատուցվող ծառայությունների ընդլայնման պարագայում անգամ՝ առևտրային կազմակերպություններում կուտակվում էին երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտավորություններ, նվազում էր վճարունակության մակարդակը: Մյուս կողմից՝ դրամական հոսքերի գծով անարդյունավետ կառավարչական

որոշումներ կայացնելիս գործարարության որոշակի փուլերում ձևավորվում էին դրամի ավելցուկային կուտակումներ, որոնք որոշակիորեն սառեցվում էին և դառնում չաշխատող ակտիվներ:

Գործարար աշխարհում ձևավորվեց մի իրավիճակ, երբ առևտրային կազմակերպության ֆինանսական հաշվետվություններ օգտագործողները փորձում էին հասկանալ, թե առավելապես որ ոլորտներում են ստեղծվում և օգտագործվում դրամական միջոցները և դրանց համարժեքները: Այդ հարցադրումները հատկապես արդիական էին բանկային համակարգում, որտեղ դրամական միջոցները հանդես էին գալիս որպես «յուրօրինակ արտադրանք»: Այստեղ դրամական հոսքերի ակտիվությունը, կապված ֆինանսական միջնորդության, դրամական միջոցների ներգրավման և տեղաբաշխման գործառնությունների հետ, որոշումներ կայացնողների շրջանում անհրաժեշտություն էր առաջացնում դրա վերաբերյալ հրապարակելու ֆինանսական հաշվետվություն: Ընդ որում, հարկ էր որոշել դրամական միջոցների ոչ միայն անցյալի, այլև ապագա հոսքերի գումարները, ժամանակի մեջ դրանց բաշխումը և որոշակիությունը: Ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները նպատակահարմար գտան ուսումնասիրել շահութաբերության և գուտ դրամական միջոցների հոսքերի փոխառնչությունները:

Դրամական հոսքերի կարգավորման և նպատակային կառավարչական որոշումներ կայացնելու համար դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին գործողության մեջ դրվեց «Դրամական հոսքերի մասին» հրապարակվող ֆինանսական հաշվետվությունը, որը եկավ լրացնելու մինչ այդ արդեն հրապարակվող հաշվապահական հաշվեկշիռի և ֆինանսական արդյունքներին վերաբերող հաշվետվությունները: Ներկայումս դրամական հոսքերի մասին հաշվետվության ներկայացումը կարգավորվում է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 7-ով, որի նպատակն է «ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների ժամանակագրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվական ներկայացումը դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության օգնությամբ՝ դրամական հոսքերը դասակարգելով ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունների»<sup>1</sup>:

Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ կազմակերպության դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը օգտակար է այն առումով, որ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին տրամադրում է հիմքեր՝ գնահատելու կազմակերպության՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ստեղծելու կարողությունը և դրամական միջոցների հոսքերի օգտագործման պահանջները:


Միջազգային չափորոշիչներով՝ կազմակերպությունների դրամական հոսքերը ներկայացվում են երեք՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական ուղղություններով: Գործառնական գործունեությամբ կազմակերպությունը հիմնականում ապահովվում է հասույթով, քանի որ այն տնտեսավարման որոշիչ նպատակն է: Ներդրումային գործունեությունը երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, իսկ ֆինանսական գործունեության արդյունքում տեղի են ունենում կազմակերպության ներդրած սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխություններ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին», բաժին 1:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, կետ 6:

Ընդ որում, դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են ուղղակի՝ հիմնված գործառնությունների արձանագրման դրամարկային սկզբունքի վրա, և անուղղակի՝ գործառնությունների հաշվեգրման սկզբունքի հիման վրա: Առաջին դեպքում հաշվարկային ելակետ է համարվում թողարկման (ծառայությունների իրացման) ծավալը, իսկ երկրորդ դեպքում՝ հաշվետու ժամանակաշրջանում ձևավորված զուտ շահույթը (գծապատկեր 1):

Ուղղակի մեթոդով կազմված դրամական հոսքերի հաշվետվության հիմքում *դրամարկային սկզբունքն է*, համաձայն որի կազմակերպությունների դրամական միջոցների շարժն ու մնացորդը ներկայացվում են դրամի ելքի և մուտքի փաստացի ֆիզիկական հոսքերի հիման վրա: Այս դեպքում հաշվետվությունը լրացնելիս ուղղակիորեն օգտվում են դրամական միջոցները հաշվառող սինթետիկ հաշիվների հաշվետու ժամանակաշրջանի գրանցումներից:



Գծապատկեր 1. Ուղղակի և անուղղակի մեթոդներով դրամական հոսքերի ներկայացման համընդհանուր մոտեցումները<sup>3</sup>

Անուղղակի մեթոդով դրամական հոսքերը ներկայացնելիս չեն օգտվում կազմակերպություններում վարվող դրամական միջոցների սինթետիկ հաշիվներում արձանագրվող դրամի փաստացի շարժի տեղեկատվությունից և հաշվետվությունների կազմման համար հիմք են ընդունում ոչ թե դրամարկային, այլ *հաշվեգրման սկզբունքը*: Հաշվեգրման սկզբունքի կիրառման պարագայում արդեն հաշվի չի առնվում դրամի փաստացի շարժը, այլ նկատի են առնվում այն հանգամանքները, որոնք անուղղակիորեն հանգեցրել են դրամական միջոցների ավելացմանը կամ նվազմանը:

Նշելով, որ անուղղակի եղանակով դրամական հոսքերի ներկայացման դեպքում օգտվում են ֆինանսական իրավիճակի մասին հաշվետվության (հաշվապահական հաշվեկշիռ) հոդվածների սկզբնական և վերջնական մնացորդների փոփոխությունից և ֆինանսական արդյունքների մասին հաշվե-

<sup>3</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը:

տվության տեղեկատվությունից: Այս դեպքում փոխկապակցվում են հաշվապահական հաշվեկշռի հոդվածային շեղումներն ու ֆինանսական արդյունքների հաշվետվության ցուցանիշները, որպեսզի դրամական հոսքերի շարժը ներկայացվի ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունների:

Եթե դրամական հոսքերի՝ ըստ վերոնշյալ երեք ուղղությունների ներկայացմանը հիմնականում կողմ են մասնագիտական գրականության մեջ, ապա հոսքերի ներկայացման հաշվարկային մոտեցումների հարցում կան տարակարծություններ ինչպես հեղինակների շրջանում, այնպես էլ միջազգայնորեն ընդունված ստանդարտում: Այսպես՝ ՀՀՄՍ 7-ով խրախուսվում է գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը ուղղակի մեթոդով ներկայացնելը<sup>4</sup>: Ուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացման կողմնակից են նաև մի շարք հեղինակներ՝ բերելով բազմաթիվ փաստարկներ<sup>5</sup>:

- անուղղակի մեթոդը փոխկապակցում է կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքները դրամական հոսքերի հետ և որպես հաշվարկային հիմք ընդունում զուտ շահույթը,
- եթե դրամարկղային եղանակի վրա հիմնված ուղղակի մեթոդը ներկայացնում է դրամի փաստացի շարժն ըստ ուղղությունների, ապա հաշվեգրման հիմքով անուղղակի մեթոդի կիրառմամբ հնարավորություն է ստեղծվում կողմնորոշվելու տեսանելի ապագայում դրամական հոսքերի կազմում սպասվող փոփոխությունները իրատեսորեն գնահատելու համար,
- ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվարկը շատ ավելի բարդ և աշխատատար է, քան անուղղակի մեթոդի պարագայում,
- անուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացումը, ի տարբերություն ուղղակի մեթոդի, առավել սերտ փոխկապվածություն ունի կազմակերպությունների ֆինանսական դրության և ֆինանսական կայունության պաշարի հետ,
- տնտեսական գործունեության վերլուծությունը առավելապես միտված է կազմակերպությունների ապագա ֆինանսական կայունության ամրապնդման պահուստների բացահայտմանը, այլ ոչ թե անցյալ դեպքերի գնահատմանը, որին առավել նպաստում է անուղղակի եղանակով դրամական հոսքերի ներկայացումը,
- անուղղակի եղանակով դրամական հոսքերի ներկայացումը առավել սերտորեն է առնչվում կազմակերպությունների «տնտեսական գործունեության անատոմիայի» հետ, քանի որ հաշվի է առնում տնօրինվող ակտիվների, պարտավորությունների փոփոխությունները, ինչպես նաև ձևավորվող ֆինանսական արդյունքներն ու զուտ շահույթը:

Սակայն, դրա հետ մեկտեղ, մասնագիտական գրականությունում փաստարկներ են բերվում հոգուտ ուղղակի մեթոդով դրամական միջոցների հոսքերի հաշվետվության ներկայացման: Մասնավորապես նշվում է<sup>6</sup>:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին», կետ 19:

<sup>5</sup> Տե՛ս **Duhovnik M.**, Improvements of cash flows statement control function in financial reporting // University of Ljubljana Econ. Fac., Vol 26, էջ 123–150:

<sup>6</sup> Տե՛ս **Хахонова Н.Н.**, Методы оценки рисков денежных потоков по операционной деятельности организации /Н.Н. Хахонова, С.А. Уколова//. Актуальные проблемы экономики образования и науки: материалы четвертой региональной научно-практической конференции /Ростовский государственный экономический университет (РИНХ). Ростов-н/Д, 2011, էջ 92–95:

- ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվարկը հիմնվում է կազմակերպությունների գործունեությունից կամ ծառայությունների մատուցումից իրացման հասույթի վրա և չի պահանջում զուտ շահույթի գծով ճշգրտումներ,
- ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվարկները չեզոքացնում են ոչ դրամային էֆեկտները, որոնք առկա են անուղղակի մեթոդը կիրառելիս. դրանցից են ամորտիզացիոն հատկացումները, ակտիվների վերագնահատումներից եկամտային աճը կամ արժեզրկման վնասը և այլն,
- դրամարկղային հենքով ուղղակի մեթոդը կիրառելիս դրամական հոսքերի ձևավորումը չի իրականացվում հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների հաշվետվությունների հիման վրա, որոնց հողվածները ոչ արժանահավատ կարող են լինել ակտիվների ու պարտավորությունների մնացորդների անիրատեսական վերագնահատումների հետևանքով,
- ուղղակի մեթոդով դրամական հոսքերն առավել վերլուծական են և բացառում են դրամի ներհոսքերի և արտահոսքերի հաշվանցումները, որոնք կարող են տեղի ունենալ անուղղակի մեթոդի կիրառման դեպքում և ազդել վերլուծության տեղեկատվական ապահովվածության վրա:

Մյուս կողմից՝ անուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացման նպատակահարմարությունը հիմնավորվում է կազմակերպությունների հեռանկարային կառավարման առումով: Մասնագիտական գրականությունում կարծիք է հայտնվում, որ անուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվետվությունը ռազմավարական նշանակություն ունի, քանի որ ներկայացնում է դրամի շարժի վրա դրականորեն և բացասականորեն ազդող տնտեսավարման գործոնները: Այս առումով, կազմակերպությունների կառավարման օղակները, դրամական հոսքերի անուղղակի մեթոդով կազմված հաշվետվությունների հիման վրա, տեսանելի ապագայում միջոցներ են ձեռնարկում դրամական մուտքերի և ելքերի համախառն սպասելիքների, դեբիտորական պարտքերի կրճատման, պարտավորությունների չափավոր ավելացման ուղղությամբ: Իսկ ուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվետվությունը առավելապես մարտավարական կառավարման խնդիրներ է լուծում, քանի որ, ըստ որոշակի ժամանակահատվածի, բացահայտում է դրամական արտահոսքերի ոլորտները և դրամական զուտ հոսքերի նվազման վրա բացասական ու դրական ազդեցության գործոնները<sup>7</sup>:

Դրամական հոսքերի հաշվետվության անուղղակի մեթոդի կիրառման հիմքում զուտ շահույթին առնչվող ճշգրտումներն են, որոնք բացառում են ոչ դրամային փոփոխությունները ֆինանսական արդյունքների ձևավորման գործընթացում: Այնուհետև դրամական միջոցների հաշվեկշռային փոխկապվածության մեջ գտնվող հողվածների փոփոխություններով ներկայացվում են գործառնական, ֆինանսական և ներդրումային գործունեությամբ պայմանավորված դրամական հոսքերը: Այդ նպատակով հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական ակտիվների ու պարտավորությունների հողվածների տարբերությունները՝ հաշվեկշռված

<sup>7</sup> Տե՛ս **Селезнева А.Н.**, Классификация финансовых потоков как фактор повышения эффективности их управления. Аудит и финансовый анализ, 2012, №3, էջ 448–453:

կապ ստեղծելով դրանց ձևավորման ու դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների միջև:

Համաձայն ՀՀ ԿԲ հրահանգավորման՝ առևտրային բանկերում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը առաջարկվում է կազմել ուղղակի մեթոդով՝ ներկայացնելով հաշվետու ժամանակաշրջանի համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական տեսակները:

Ուղղակի եղանակով դրամական հոսքերը արտացոլում են բանկի դրամարկղում և բանկային հաշիվներում գործառնական, ներդրումային, ֆինանսական գործունեությունից (ներառյալ արտասովոր դեպքերը) Հայաստանի Հանրապետության արժույթի և արտարժույթի, դրամական միջոցների համարժեքների մուտքերը և ելքերը, հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի մնացորդները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքային տարբերությունների հետևանքով դրամական միջոցների և դրանց համարժեքների աճը կամ նվազումը<sup>8</sup>: Այս մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերի ձևավորումը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

*Ուղղակի մեթոդով գործառնական գործունեությունից դրամական հոսքերի հաշվետվության ներկայացման մեխանիզմը բանկային համակարգում<sup>9</sup>*

Հոդվածներ	Դրամական հոսքերին առնչվող գործառնություններ
Ստացված տոկոսներ, վճարված տոկոսներ	Թղթակցային և բանկային հաշիվների, ներգրավված ավանդների, ստացված վարկերի, ռեպո համաձայնագրերի և այլ պարտավորությունների դիմաց բանկի կողմից վճարված տոկոսային եկամուտներ, ծախսեր
Ստացված/վճարված կոմիսիոն գումարներ	Բանկի կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացված գումարներ, այլ կազմակերպության կողմից բանկին մատուցված ծառայությունների դիմաց վճարված գումարներ
Դուրս գրված ակտիվների վերադարձ	Անհուսալի ձանաչված վարկերի, դեբիտորական պարտքերի, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների վերականգնումից առաջացած դրամական ներհոսք
Վճարված աշխատավարձ	Բանկի աշխատողներին վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների գումարներ
Այլ գործառնական հոսքեր	Հաշվետու ժամանակաշրջանում գործառնական գործունեությունից ստացված եկամուտներ և վճարված ծախսեր (ավանդների պահովագրում, տույժերի, տուգանքների, կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսումներ
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում)	Թանկարժեք մետաղների, առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ներդրումների, ածանցյալ ֆինանսական ակտիվների, տրամադրված վարկերի, ներդրված ավանդների և ռեպո համաձայնագրերի, ֆինանսական վարձակալության և այլ գործառնական ակտիվների դիմաց վճարված, ինչպես նաև դրանց վերադարձի գուտ գումարներ
Վարկերի նվազում (ավելացում)	Բանկի կողմից հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխառվություններ, ռեպո համաձայնագրեր, ինչպես նաև դրանց մարման գուտ գումարներ
Լիզինգից գումարներ	Վարձատուի կողմից տրամադրված ակտիվի դիմաց ստացված գումարներ
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	Բանկի կարճաժամկետ ավանդների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների գումարների աճ կամ նվազում

<sup>8</sup> Տե՛ս բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 10.06.2007 թիվ 205 Ն որոշումը, կետ 7.1:

<sup>9</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:

Ներդրումային և ֆինանսական գործունեությունից բխող դրամական հոսքերի ներկայացումը ուղղակի մեթոդով նույնպես հիմնվում է դրամական միջոցների փաստացի շարժի վրա՝ ի տարբերություն անուղղակի մեթոդի, որը հաշվեգրման հիմունքով է ձևավորում ներդրումային և ֆինանսական դրամային հոսքերը: Եթե ներդրումային գործունեությունից դրամական հոսքերը արտացոլում են երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումից առաջացած զուտ հոսքերը, ապա ֆինանսական գործունեությունից հոսքերը ներկայացնում են այն գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերը, որի հետևանքով տեղի են ունենում բանկի սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ:

Աղյուսակներ 2-ում և 3-ում ներկայացնենք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրահանգավորման ուղղակի մեթոդով ներդրումային և ֆինանսական գործունեության դրամական հոսքերի հաշվետվությունների ձևավորման մեխանիզմը:

**Աղյուսակ 2**

*Ուղղակի մեթոդով ներդրումային գործունեությունից դրամական հոսքերի հաշվետվության ներկայացման մեխանիզմը բանկային համակարգում<sup>10</sup>*

<i>Հոդվածներ</i>	<i>Դրամական հոսքերին առնչվող գործառնություններ</i>
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)	Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի (այդ թվում՝ ֆակտորինգի) նվազումից և ավելացումից առաջացած դրամական միջոցների հոսքեր
Հիմնական միջոցներում ներդրումների նվազում (ավելացում)	Բանկի կողմից հիմնական միջոցներում, ոչ նյութական ակտիվներում, ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների միջոցով առաջացած դրամական միջոցների հոսքեր
Չուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	Կանոնադրական կապիտալի համալրման հաշվում դրամական միջոցների կուտակում, բռնագանձված գրավի ձեռքբերում/օտարում, ներդրումային գործառնություն հանդիսացող գործառնություններից առաջացած հոսքեր
Հիմնական միջոցների օտարում	Բանկի հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից առաջացած դրամական միջոցների ներհոսք

**Աղյուսակ 3**


*Ուղղակի մեթոդով ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի հաշվետվության ներկայացման մեխանիզմը բանկային համակարգում<sup>11</sup>*

<i>Հոդվածներ</i>	<i>Դրամական հոսքերին առնչվող գործառնություններ</i>
Վճարված շահաբաժիններ	Բանկի կողմից բաժնետերերին վճարված շահաբաժինների գումարներ
ՀՀ ԿԲ փոխառությունների ավելացում (նվազում)	Բանկին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի ավելացումից և նվազումից առաջացած դրամական միջոցների հոսքեր
Բանկերից փոխառությունների ավելացում (նվազում)	Բանկին այլ բանկերից տրամադրված վարկերի, ռեպո համաձայնագրերի ավելացումից և նվազումից առաջացած դրամական միջոցների հոսքեր
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց ստացված դրամական միջոցների հոսքեր
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում	Բանկի կանոնադրական կապիտալում բաժնետերերի ներդրումներից առաջացած դրամական միջոցների հոսքեր
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից	Բանկի կողմից սեփական բաժնետոմսերի հետզման համար վճարված գումարներ, կանոնադրական կապիտալի համալրման համար միջոցների ներգրավում և ֆինանսական գործունեություն հանդիսացող այլ գործառնությունների դիմաց դրամական հոսքեր

<sup>10</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:  
<sup>11</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:

Չնայած այն հանգամանքին, որ ինչպես ֆինանսական հաշվետվությունների կազմման միջազգային չափորոշիչները, այնպես էլ ՀՀ կենտրոնական բանկի հրահանգները խրախուսում են գործառնական գործունեության դրամական հոսքերի ուղղակի մեթոդով ներկայացումը, այնուամենայնիվ, առևտրային բանկերը կարող են դիմել նաև անուղղակի մեթոդին: Հիմնական շարժառիթն այս պարագայում ոչ միայն դրամական հոսքերի հաշվետվության ներկայացման աշխատատարության կրճատումն է, այլև ռազմավարական նպատակներին միտված դրամական հոսքերի հետագա շարժի արդյունավետ կառավարման համար տեղեկատվության ձեռքբերումը և դրամի շարժի գծով հեռանկարային բնույթի կառավարչական որոշումների կայացումը:

Այսպես՝ ՀՀ կենտրոնական բանկը, որպես այլընտրանքային տարբերակ, առևտրային բանկերին առաջարկում է դրամական հոսքերի մասին հաշվետվությունը կազմել անուղղակի մեթոդով<sup>12</sup>: Այս դեպքում առևտրային բանկերում մինչև հարկումը ձևավորված շահույթը ճշգրտվում է հետևյալ հերթականությամբ (գծապատկեր 2):



**Գծապատկեր 2.** Անուղղակի մեթոդով գործառնական գործունեությունից դրամական հոսքերի հաշվետվության ներկայացման մեխանիզմը բանկային համակարգում<sup>13</sup>

<sup>12</sup> Տե՛ս բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 10.06.2007 թիվ 205 Ն որոշումը, կետ 7.40:

<sup>13</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը:



Երբ անուղղակի մեթոդով ներկայացվում են ներդրումային և ֆինանսական գործունեության դրամական հոսքերը, ապա այս պարագայում օգտագործվում են այդ հոսքերն արտահայտող հաշվեկշռային հոդվածների սկզբնական և վերջնական մնացորդների շեղումները՝ շրջանցելով համապատասխան հաշվապահական հաշիվներից պահանջվող տեղեկատվության ուղղակի ձեռքբերումը և սահմանափակվելով միայն բանկի ֆինանսական իրավիճակի մասին (հաշվապահական հաշվեկշիռ) տեղեկատվությամբ:

Այս դեպքում ներդրումային գործունեության զուտ դրամական հոսքերը հաշվարկվում են հետևյալ կերպ.

$$\Delta \text{ ներդրումային} = \Delta \text{ ոչ ընթացիկ ակտիվների հոդվածներ} + \Delta \text{ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ}$$

Ֆինանսական գործունեության զուտ դրամական հոսքերը հաշվարկվում են հետևյալ կերպ.

$$\Delta \text{ ֆինանսական} = \Delta \text{ շահաբաժինների գծով պարտավորություններ} + \Delta \text{ փոխառությունների գծով պարտավորություններ} + \Delta \text{ բանկի կանոնադրական կապիտալում ներդրումներ}$$

Այսպիսով՝ ուղղակի և անուղղակի մոտեցումներով առևտրային բանկերի դրամական հոսքերի մեթոդաբանական վերլուծության հիման վրա կարելի է կատարել եզրահանգումներ: Չնայած այն հանգամանքին, որ դրամական հոսքերի հաշվետվությունները կարգավորող փաստաթղթերով հիմնականում առաջարկվում է ուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացումը, առևտրային բանկերին հնարավորություն է ընձեռվում նաև անուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացման համար, որը բխում է ոչ միայն բանկերում կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունից, այլև հրապարակվող ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների որոշումներից: Բացի այդ, եթե ուղղակի մեթոդով դրամական հոսքերի ներկայացումը փաստում է արդեն իսկ կայացած դրամի շարժն ըստ առանձին ուղղությունների և համարվում է հետադարձ (ռետրոսպեկտիվ) վերլուծության արդյունք, ապա անուղղակի մեթոդով դրամական հոսքերը առավելապես ռազմավարական վերլուծության տեղեկատվական աղբյուր են՝ ընդգծելով բանկերի ֆինանսական իրավիճակի հաշվետվության հոդվածների մնացորդների փոփոխության արդյունքում հոսքային կառուցվածքային սպասվելիք փոփոխությունները:

### Օգտագործված գրականություն

1. Բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 10.06.2007 թիվ 205 Ն որոշում:
2. ՀՀՄՄ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին»:
3. Селезнева А.Н., Классификация финансовых потоков как фактор повышения эффективности их управления, "Аудит и финансовый анализ", 2012, №3.
4. Хахонова Н.Н., Методы оценки рисков денежных потоков по операционной деятельности организации /Н.Н.Хахонова, С.А. Уколова// Актуальные проблемы экономики образования и науки: материалы четвертой региональной научно-практической конференции /Ростовский государственный экономический университет (РИНХ). Ростов-н/Д, 2011.
5. Metka Duhovnik, Improvements of cash flows statement control function in financial reporting, // University of Ljubljana Econ. Fac. Vol. 26.

**НАРИНЕ САРГСЯН**

Соискатель кафедры  
Управленческого учета и аудита АГЭУ

***Проблемы методологии анализа денежных потоков в коммерческих банках.***– Представление в организациях денежных потоков на основе прямых или косвенных методов до сих пор является темой активного обсуждения теоретиков. Имея свои отрицательные и положительные черты, оба метода считаются приемлемыми по международным стандартам при составлении финансовой отчетности. В статье представляются методологические подходы анализа денежных потоков в банковской сфере с точки зрения применения прямого или косвенного метода составления финансовой отчетности.

**Ключевые слова:** *финансовая отчетность, прямой и косвенный метод составления денежных потоков, управленческие решения.*

JEL: G2, G33, G24, G29

**NARINE SARGSYAN**

Researcher at the Chair of  
Managerial Accounting and Audit at ASUE

***Methodology Issues of Cashflows Analysis in Commercial Banks.***– Representation in organizations of cash flows statements on the basis of direct or indirect methods still leads theorists to active discussions. With their positive and negative features, both methods are considered acceptable by international standards of financial reporting. The methodological approaches to the analysis of cash flows in the banking sector from the point of view of using direct or indirect methods for the preparation of financial statements are presented in the given paper.

**Key words:** *financial statements, direct and indirect method of cash flows statement presentation, management solutions.*

JEL: G2, G33, G24, G29